

**X – XII դԱՐԵՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱԼԻՇԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Ս.Մ.ՄԵԻՏԱՐՅԱՆ

Ղ.Ալիշանը (1820 – 1901) գրականություն մուտք գործեց իբրև բանաստեղծ և հեռացավ իբրև բազմահմուտ գիտնական: Խ.Աբովյանի կրտսեր ժամանակակիցը երկու հական քայլեր կատարեց մեր գրականության մեջ.

ա) իր գեղարվեստական երկերը շարադրեց արևմտահայ աշխարհաբարով (1845թ.¹ նաև գիտական աշխատությունները),

բ) մերժեց կլասիցիստական գեղագիտությունը և առաջադրեց ռոմանտիկականը: XIX դարի 40-ական թվականներին մեր մշակույթի պատմության մեջ դա մեծ առաջընթաց էր: Իր պահվածքով, գործելակերպով և աշխարհայացքով նա մնաց իբրև նշանավոր հայրենասեր՝ հորդորելով սերունդներին.

Մ'ուրանայք զերկիրդ ու զագգդ սիրուն,

Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն...²

Նա ևս իրագործեց այն մշակութային ծրագրերի մի մասը, որ երազում էր կյանքի կոչել մեծն Մխիթար Սեբաստացին (1676 – 1749)³՝ հիմնելով իր միաբանությունը 1701 թվականին⁴: Թերևս Ղ.Ալիշանն էլ ուներ գիտամշակութային սեփական ծրագիրը, որի հետևողական կենսագործմանն էր միտված իր ողջ կյանքը: Նա «Հայապատում» աշխատությունը՝ իր կարապի երգը, գրեց «ի հիշատակ երկդարյան հոբելյանին Ուխտիս Մխիթարյան»: Խորհրդանշական մի բան էր դա, երբ իր 60-ամյա գիտական գործունեությունը նա ավարտում էր կոթողային այս երկով:

Երկարամյա գիտական-հետազոտական իր կյանքի ընթացքում նա անդրադարձավ հայ կյանքի գրեթե բոլոր բնագավառներին. «դրսևորելով իրեն որպես ակնավոր բանաստեղծ ու արձակագիր, – գրում է Ս.Շտիկյանը, – որպես Հայաստան աշխարհի հմուտ տեղեկագիր-պատմաբան ու աշխարհագրագետ, որպես կարող թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, իտալերենից, պարսկերենից – հայերեն)... հրաշալի կերպով դրսևորեց իրեն ազգային հրապարակախոսության բնագավառում, ոչ պակաս հաջողությամբ հանդես եկավ որպես հայ դասականների քննական բնագրերի պատրաստող ու հրապարակող»⁵: Նույնը կարելի է ասել հայ կյանքի ամենատարբեր դարաշրջանների վերաբերյալ նրա ունեցած հետաքրքրությունների մասին: Առանձնապես ուշագրավ են X – XII դդ. կապակցությամբ արտահայտած նրա կարծիքները: Մի դարաշրջան, որ նորագույն շրջանի հետազոտողների կողմից բնութագրվեց որպես Վերածնական⁶: Մեր

¹ Տե՛ս Ղ.Ա.Ն.Ղ. Ալիշան, Երկեր, Ե., 1981, էջ 4 – 5:

² Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962, էջ 483:

³ Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 17:

⁴ Տե՛ս Ն.Ա.Կիրյան, Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, Վիեննա, 1912, էջ 3:

⁵ Ղ.Ալիշան, նշվ. աշխ., էջ 3:

⁶ Տե՛ս Երվանդ Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Ե., 1971, էջ 461: Վազգեն Գևորգյան, Հետադարձ ակնարկ, Գրիգոր Նարեկացի, Ե.,

մշակույթի այդ շրջանի թուխքային զարգացման և առաջընթացի առթիվ Մ.Աբեղյանը հետևյալ կարևոր դիտողությունն է անում. «Այս փոփոխությունը հետևանք էր կյանքի և աշխարհահայեցողության փոփոխության: Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին արդեն մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում»: Շարժման ընդգրկման ժամանակաշրջանը նա համարում է XI - XVI դարերը, մինչդեռ հետագա այլ գիտնականներ իրավամբ մատնանշում են նաև X-ը և հայ բանաստեղծության հսկային՝ Գր.Նարեկացուն⁷:

Ընդհանուր գծերով հայկական Վերածնունդյան վաղ շրջանն ընդգրկում է X - XII դարերը: Ի տարբերություն նախորդի շրջանի, այժմ տիրապետող է դառնում բանաստեղծական խոսքն՝ իր տարաբնույթ ձևերով: Պատմագրությունը նկատելիորեն իր տեղը գիշում է չափածոյին:

Մխիթարյան գիտնականների կարծիքով, հայ կյանքի զարգացման բարձրակետը V դարն է, և հետևելով հույն և հռոմեացի հետազոտողների օրինակին՝ այն համարում են Ոսկեդար՝ Դ.Ալիշանն էլ Մ.Չամչյանի և մյուսների պես X - XII դարերը՝ Ոսկեդարին հաջորդած «երկրորդ թարգմանչաց» կամ Արծաթի դար է կոչում¹⁰: Նա այս ժամանակաշրջանի կատարելատիպ արվեստագետներ է համարում Գր.Նարեկացուն և Ն.Շնորհալուն, որոնք կրոնական, գիտական ու գրական գործիչներ են՝ բարոյական բարձր առաքինությունների տեր անձնավորություններ:

Նարեկացիական արվեստի մասին գրականագետները խոսում են անթաքույց հիացմունքով: Մ.Սկրյանը գրում է. «Մատյանը» համաշխարհային քնարերգության պատմության մեջ իր ժանրային առանձնահատկություններով եզակի գործ է, ստեղծագործական միակգամայն ինքնուրույն մի մտահղացում¹¹:

XIX դ. գրականագիտական միտքը, բարձր գնահատելով բանաստեղծին, դեռևս նրան չի ընկալում իբրև համաշխարհային գրականության մեծերից մեկը: Որպես կանոն՝ ուշադրությունը կենտրոնացվում է բանաստեղծի մեկնությունների և կրոնական բնույթի մյուս ստեղծագործությունների վրա, թեև այլ բովանդակություն նրա երկերը չունեն: Հանճարի անսովոր «վարքագիծը», նրա պատկերավոր մտածողությունն ու անսանձ երևակայությունն իրենց զգացնել են տալիս, այնուամենայնիվ, ստիպում խոսել գեղագիտական խնդիրների շուրջ: «Ապարանից խաչի պատմության» մասին Դ.Ալիշանը գրում է այսպես. «Սա գերաթուրյց պատմվածն է, կարծես թե ոչ միայն մտոքն (իմաստիվք), այլև շարաբանություն բռնի և անկարելի կընե ըմբռնել գկարգն... Հարկ է ընթերցողին անոր գծած օղային ճամբուն մեջենն նույնպես թուշտելով

1979, էջ 598 - 600: Э. С. Меламед, *Межелайтис, Армянский феномен*, Е., 1982, с. 60 - 65. Հրանտ Թամրազյան, Հայ քննադատություն, հ. 2, ե., 1985, էջ 25 - 50:

⁷ Մանուկ Աբեղյան, երկեր, հ. 7, ե., 1970, էջ 17:

⁸ Տե՛ս Մկրտիչ Մկրյան, Հայ հին գրականության պատմություն, ե., 1976, էջ 497:

⁹ Տե՛ս Գաբրիել Զարբանալյան, Հայկական հին դպրության պատմություն, (Դ-ժգ դար), Վենետիկ, 1897, էջ 267:

¹⁰ Տե՛ս Դևոնդ Ալիշան, Շնորհալի և պարագայուր, Վենետիկ, 1873, էջ 109:

¹¹ Մ. Մկրյան, նշվ. աշխ., էջ 497:

հետևիլ՝ որչափ կարենա»¹²։ Գիտնական-բանաստեղծը տեսնում և գնահատում է Հսկայի երևակայության անսանձ թռիչքի ուժը։ Նարեկացուն տված գնահատումների մեջ նա աստիճանաբար դառնում է ավելի ազատ և համարձակ, ճշգրտում իր պատկերացումները բանաստեղծի և Հայ բանաստեղծական արվեստի մասին։ Նրան դարձյալ դնելով Ն.Շնորհալու և Ն.Լամբրոնացու կողքին, կրկին ուշադրությունը սևեռելով վերջինիս անսովոր երևակայության վրա՝ նկատում է. «Գրիգորի հրեշտական մանուկությունը ոչ միայն երկնաթռիչ աղոթիվք՝ իր վնասը անվամբ՝ կոչված Նարեկ, գովքն Հայտնե, որ իր Գործոց գլուխն է, ...ամենն շատ առ Աստված նվիրված աղոթքն է ...այլևս ուրիշ ամեն գրվածոց մեջ այլ հրեշտակային թևոք թռչի, հրեշտակային նվազարան մի հնչեցնե...»։ Իսկ բանաստեղծի կարճ կյանքը նա պայմանավորում է նրա հուզախուժով կյանքով և զարմանում, թե «այնպիսի կրակ կրող հոգին չէր կրնար շատ դանդաղի մարմնույն մեջ, և զարմանք իսկ է սովորական կենաց միջօրեն հասնելն այլ»¹³։ Այժմ որոշ չափով փոխվում են պատկերացումները նաև Մատթանի՝ շատ կարճ ժամանակաշրջանում գրված լինելու մասին։ Հրաչյա Թամրազյանը նկատում է, որ պոեմի ստեղծագործական երկունքը և այն գրելու հորդորները կապված են Անանիա Նարեկացու անվան հետ։ Եվ ոչ միայն այդ։ Գր.Նարեկացու դրական ժառանգությունը մի ոգը դպրոցի արտադրանք է¹⁴։ Հանգամանք, որ ընդլայնում է ուսումնասիրության շրջանակները, հնարավորություն տալիս մեկ այլ հարթության մեջ դիտելու բանաստեղծին և նրա ստեղծագործությունը։

Ղ.Ալիշանը Գր.Նարեկացու բանաստեղծությունը բաժանում է երկու մասի՝ «Մատթան ողբերգության» պոեմ՝ «Գործոց գլուխն», և տաղեր, գանձեր ու ներբողաններ։ Հետագայում նրա մասին հյուսված վարքերի ու ավանդազրույցների հենքի վրա քննում և նրա ստեղծագործության երկրորդ մասի համար նկատում է, թե ջրի վրայով գնում էր դեպի Արտեմ կղզի, «առ Տիրամայրն, զոր կերգեր հետո՝ մեզի նկարագրելով գնա «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ»-ում և իր ճառերի մեջ, ուր դարձյալ «վերաթռիչ և հոգերգակ է»¹⁵։ Հատկանշական է, որ գիտնականը մտասեռվում է բանաստեղծի արվեստի ամենակարևոր հատկանիշների վրա։ Նա գգում է Գր.Նարեկացու անսովոր շունչը, արտասովոր պատկերային համակարգը և մտավոր փրթխարի թռիչքը։ Իր բառերի տարափով նա «հեղեղորեն թափե նկարագրությունը և հրեղենորեն փայլեցնե»։ Շատերն են ցանկացել հետևել իրեն, բայց միշտ «իրմե վար մնացեր են»¹⁶։ Քննելով ազգային և համազգային խնդիրը՝ նկատում է, որ բանաստեղծի ստեղծագործությունը հայրենական սահմաններից դուրս է գալիս, և կարևոր է. «ազգային նյութի դուրս բաներու վրա ալ անանկ շնորհք մը ձգե, որ անոնք ալ ազգահոգի կրլլան, ինչպես Նարեկացվույն «Մայլիկը», «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտը» և այլն»¹⁷։ Ղ.Ալիշանն այս դեպքում այլ չափանիշով է մոտենում Ն.Շնորհալու և մյուսների ստեղծագործություններին՝ կարծես ցանկանալով «ոչ ազգային

¹² Ղ.Ա.Ու. Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 88:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս Հրաչյա Թամրազյան, Նարեկյան դպրոցը, Ե., 1999, էջ 94 - 104:

¹⁵ Տե՛ս Ղ.Ալիշան, Հայապատում, էջ 88:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Ղ.Ալիշան, Երկեր, էջ 109:

նյութը», «աղբահոգի» դարձնել: Դա սկզբունքն է, թեև այս պահանջն ավելի շատ վերաբերում է իր ժամանակակիցներին, քան նախորդներին: Նրա կարծիքով, մեր աղբային ոգին գրականության մեջ առավել ցայտուն դրսևորվել է՝ սկսած XIV դ.: Թե՛ Ղ.Ալիշանի, թե՛ իր ժամանակակից մյուս հետազոտողների համար¹⁸ Գր. Նարեկացին, այնուամենայնիվ, մի այնպիսի վարդապետ է, ինչպես իր ժամանակակից մյուս իմաստասերները: Մի դեպքում նա գրում է, թե «Ձեմք իշխեր բանաստեղծի հանկարծական թրիչքներով հավասարել պինքը Նարեկացվո ի նմանաց»¹⁹, մի այլ դեպքում՝ նրան դասում է շարքային բանաստեղծների շարքը, ինչպես Վերդան Անեցու. «Վասն կառաց Աստուածութեանն» ներբողի կապակցությամբ²⁰: Այս հակասականությունը արդյունք է գեղագիտական մոտեցման պակասի և պատմամշակութային դնահատման: Անգամ այդ հակասական գնահատումների մեջ Ղ.Ալիշանի սերը Գր.Նարեկացու հանդեպ չի պակասում: Չէ՞ որ նրա կերպարը նաև բանաստեղծ-նորարարի տիպար է, որի մասին Ա.Ղազինյանը գրում է՝ նուրբ փաստարկումներով նշելով նրա գործածած ժանրերը և տաղաչափական նորությունները²¹:

Ծաղկող միջնադարյան քաղաքների մեջ զարգացման նոր ընթացք էր ապրում մտավոր հոսանքը: Կյանքի մեջ որոշակիորեն ներթափանցում էին նոր տարրեր, հրեան էին գալիս նաև աղանդավորական շարժումներ²²: Մայրաքաղաք Անիի մասին պատմում էին, թե նրա բնակիչները «շատ ուսումնասեր և կարգացող էին, և իրենք ցիրենք ալ շատագետ համարելով՝ զօտարները հպարտությամբ ծաղրեցին»²³: Դրանք թե՛ իրենց գիտության ամենածաղկուն տարիներն էին, թե՛ անխական Հայաստանի, երբ արվեստներն ու գիտությունները V դ. համեմատությամբ հասան նոր և աննախադեպ բարձր աստիճանի: Դա արդեն այլ մշակութային երևույթ էր²⁴:

Գր.Նարեկացու անմիջական հաջորդն ու նրա ավանդները շարունակողը Գր.Մագիստրոս Պահլավունին (990 - 1058) է: Ղ.Ալիշանը նրա նկատմամբ հարգալից է և դրա համար լուրջ պատճառներ ունի: Չէ՞ որ Պահլավունյաց պայազասները ծագում էին Լուսավորչի տոհմից: «Իր ընդարձակ իշխանությամբ և հպարտությամբ՝ հարմար առիթ ու դյուրություն ունեցավ իր մտավոր և հոգևոր ախորժակները բանեցնելու, գրասիրության հետ՝ հոգեսիրության եռանդն ալ ունեւ և այն ալ իբրև ժառանգություն մը ի հարց և ի նախնյաց, որով և իրենց վեհագույն նահապետին՝ Մ.Գր.Լուսավորչի համանման հաջորդաց արժանավոր ցեղապետ եղավ»²⁵, - գրում է նա: X - XI դդ. այս տոհմը տվեց հզոր դեմքեր, որոնք այդ խառնակ ժամանակներում կարողացան պահել Հայոց հայրապետական աթոռի և՛ գոյություն, և՛ հետագա բարգավաճման պատիվը: Ղ.Ալիշանը Անիի կորստյան մեջ որոշ չափով մեղադրում է Գրիգոր

¹⁸ Տե՛ս Գ. Զարբհանյան, նշվ. աշխ., էջ 554:

¹⁹ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայուր, էջ 82:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 129:

²¹ Տե՛ս Ար. Ղազինյան, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս, 1995, էջ 95 - 119:

²² Տե՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական հետազոտություններ, գիրք Ա, Ե., 1979, էջ 219:

²³ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայուր, էջ 25:

²⁴ Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Կարեն Միքայելյանի ֆոնդ, ֆ. 114, թղթ. 156:

²⁵ Ղ. Ալիշան, Շնորհալի..., էջ 25:

մեծ իշխանին և դժգոհ է, որ նա «Ազգասիրության հետ հունասիրություն ալ խառնեց»: Մյուս կողմից՝ նա է, որ վերջ դրեց թոնդրակյան աղանդին, գրեց իր նշանավոր թղթերը նրանց դեմ²⁶ և «Իշխանական գործությանը խաղաղցրենելով իր սահմանները՝ ջանաց թե՛ գինուց, թե՛ բանից ուժով նվաճել նաև մտավոր մոլորությունները» : Աղանդի դեմ գրել են IX - XI դդ. գրեթե բոլոր հեղինակները: Իր խիստ տարածված լինելու պատճառով այն մեծ վտանգ էր ներկայացնում, և Գր.Մազիստրոսը վերջ է դնում նրա գոյությանը՝ ֆիզիկապես չվնասելով աղանդավոր բնակչությանը, այլ օծելով և դարձի բերելով: Նա նաև խորությամբ ուսումնասիրում է և բացահայտում՝ աղանդի հնագույն ակունքները²⁸: Բջինում և շրջակա վայրերում (իսկ հետագայում՝ Արևմտյան Հայաստանում) նա կառուցում է և բարեկարգում բազմաթիվ վանքեր: Թղթակցում է ժամանակի նշանավոր իմաստասերների հետ: Դա միջնադարյան ազատախոհության դրսևորում էր, երբ նաև տարբեր դավանանքի ու ազգության մարդիկ էին հաղորդակցվում՝ որպես բարեկամներ: Վանքերի և ուսումնական հաստատությունների հետ, «ուր որ գիտնական մը կար, անոր հետ կը թղթակցեր ոչ միայն ընդ ազգայինս, այլև ընդ հույնս, ասորիս, արաբացիս և պարսս, որոց լեզվաց ալ բավական հմտություն ունէր»²⁹: Բանաստեղծի «Հազարտոգեան» կոչված պոեմի կապակցությամբ Ղ.Ալիշանը հակասական կարծիքներ է հայտնում՝ մերթ հիացական և մերթ մերժողական: Սխալմամբ դա Իբրահիմ ամիրային ուղղված գրվածք համարելով՝ նաև ավելացնում է. «Մեզի համար իր աճապարանքն ալ շատ պանծալի չէ, որովհետև անհարթ և անհամ չողեր և ձևեր ալ մատուցեր է»³⁰:

Գր.Մազիստրոսի ժառանգության մի մասն են կազմում «Քերականի մեկնությունը» աշխատությունը և թարգմանությունները: Ընդունելով, որ նա է թարգմանել Պլատոնի «Տիմեոս» և «Ֆեդոն» երկխոսությունները և Էվկլիդեսի «Երկրաչափությունը», նա նշում է, որ փաստերը պակասավոր են (այդ կապակցությամբ վեճերը շարունակվում են ցայսօր)³¹: Այս դեպքում կարևորվում է այն, որ սկսում էին մեծ առաջընթաց ապրել «արտաքին գիտությունները»՝ ներառելով արվեստի և գիտության նոր ճյուղեր: Գր.Մազիստրոսի մշակած ուսումնական ծրագրերը կապվում են միջնադարյան իմաստասիրության զարգացման հեռանկարների հետ: Մ.Աբեղյանը գրում է, թե ինչպես մեծ մտածողը գտնում էր, որ «Ուսումը պետք է սկսել ս. Գրքի ընթերցանությամբ և առասպելավարժությամբ, ապա հոմերական և պղատոնական և այլ գրքերի հատվածներից հետո «Չորս արհեստները»՝ թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն, և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է

²⁶ Տե՛ս Գրիգոր Մազիստրոսի Թղթերը (այսուհետև՝ Թղթեր), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 149:

²⁷ Ղ. Ալիշան, Շնորհալի..., էջ 25:

²⁸ Տե՛ս Սարգիս Մխիթարյան, Գրիգոր Մազիստրոսի գրած երկու թղթերը թոնդրակեցիների մասին (Գաղուն, 1999, № 5, էջ 33 - 39):

²⁹ Ղ. Ալիշան, Շնորհալի, էջ 25:

³⁰ Նույն տեղում:

³¹ Տե՛ս Մ. Արևշատյան, Գրիգոր Մազիստրոս [Հայ մշակույթի նշանավոր գործիչները (5 - 18-րդ դդ.) Ե., 1976, էջ 207]: Գ. Պետրոսյան. Էվկլիդեսի Երկրաչափության հայերեն նորահայտ տեքստը (Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից, Ե., 1986, էջ 81 - 91):

քերականություն և մյուսները (ճարտասանություն և դիալեկտիկա – Ս.Մ.)»³²։ Իր ստեղծագործությունները, գործունեությունը և ծրագրերով Գրիգոր մեծ իշխանը կապվում է դարի մյուս հսկայի՝ Հովհաննես Սարկավագի հետ։ այսօր հետազոտողները խոսում են Նարեկյան դպրոցի նվաճումների մասին³³։ Դա նույնքան վերաբերում է մյուս դպրոցներին, որոնք համահայկական մշակութային մի մեծ ընդհանրություն էին կամրջվում։ Իրար։ Կյանքի շատ ասպարեզներում է Գր.Սաղիստրոսը հանդիսանում սկզբնավորող և ուսուցիչ։ Ինչպես ինքը շարունակում է իր հոգևոր և մարմնավոր նախնու՝ Սահակ Պարթևի գործը, այնպես էլ իր սերունդները շարունակում են իրենք։ Նրա որդի Գրիգոր Վկայասերը (1066 – 1105) քաղաքական բարդ մի ժամանակաշրջանում, օծվեց Հայոց Հայրապետ՝ մեր եկեղեցին փրկելով կործանումից, քանզի բյուզանդացիք ձգտում էին դրան։ Ղ.Ալիշանի կարծիքով, նրա ամենամեծ անելիքն այնուհետև եղավ մշակութային-քաղաքական լայն գործունեությունը, թարգմանչական կարևոր գործի կազմակերպումը։ Առավել կարևորը, սակայն, կաթողիկոսական նոր տան հիմնումն էր, որով Պահլավունյաց գործիչները մեր հոգևոր կյանքը բարձրացրին մի նոր աստիճանի։

Մեծ գիտնականը հիացած է նաև Հովհ.Իմաստասերի՝ Գր.Վկայասերի կրտսեր ժամանակակիցի խորագիտությունը և հանճարով, որի համար գրում է. «Բնատուր մեծ հանճար՝ կրթությունը և երկար ուսմամբ կրկին մեծցած և զարգացած»³⁴։ Գիտնականը բարձր է գնահատում Սարկավագի վաստակը հայ պատմագրության մեջ և ափսոսում է, որ նրա եռահատոր Պատմությունը կորել է³⁵։ «Բան իմաստության» պոեմի կապակցությամբ նշում է. «Կրնա աննման կոչվիլ մեր մատենագրության մեջ միանգամայն և՛ հունական հանճարով, և՛ հիշատակությամբ, գոհար մի՛ շարս իր սովերաց» (Ղ.Ալիշանին էր վիճակված հրատարակելու և ծանոթագրելու այդ ստեղծագործությունը «Բազմավեպում»՝ 1847թ.)։ Դա հայ միջնադարյան գեղագիտական մտքի խիզախ փայլատակում էր։ Նրանում արտացոլվեց վաղ Վերածնունդի գեղագիտությունն այնպես, ինչպես կլասիցիզմը՝ Ն.Բուլցոյի «Քրիթոնական արվեստ»-ում (1674)։ «Եթե դա փրկված չլիներ կորստից, – գրում է Մ.Աբեղյանը, – մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»³⁶։ Ավելորդ է պնդել, որ արվեստի և բնության, արվեստի և կյանքի փոխհարաբերության հարցերում Սարկավագը եղավ և մնաց իբրև մեծ տեսաբան, ով բանաձևեց և ամբողջական համակարգի վերածեց իր նախորդների մտածածը։ «Ուսմանց նորոգող եղավ և ընտիր ախորժակ մտցնող, – գրում է Ղ.Ալիշանը։ – Ինչ որ ԺԵ դարուն մեջ սկսան եվրոպացիք, ինքը մետասաներորդին սկսեր էր»³⁷։ Կարծես ամեն ինչ վերջնականորեն ասված է։ Ղ.Ալիշանը մոտենում է այն սահմանին, որից սկսած՝ մեր միջնադարյան բանաստեղծությունը գնահատում են նոր չափանիշներով ու նոր տեսանկյունից։

Մեծ են Հովհ.Սարկավագի ծառայությունները՝ 1084թ. Հայոց նոր տոմարի ընդունումը, իմաստասիրություն և գիտություն զարգացումն ու

³² Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 38։

³³ Տե՛ս Հրաչյա Թամրազյան, նշվ. աշխ., էջ 43 – 51։

³⁴ Ղ. Ալիշան, Երկեր, էջ 149։

³⁵ Տե՛ս Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 95։

³⁶ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 72։

³⁷ Ղ. Ալիշան, Երկեր, էջ 149։

Հովանավորումը: Լեզուների իմացությունը, ուսման, գրականության ու մտքի առաջընթացին խորապես նպաստելը և նրա մյուս արժանիքները, որոնց համար «մեծ իմաստասեր և Սոփեստես կանվանվի», նպաստել են նրա նկատմամբ սիրուն: Ղ.Ալիշանը նկատում է, որ նա հմուտ է «Ոչ միայն սրբոց և Աստվածաշունչ գրոց, այլև արտաքնոց: Ասկե այլ գեղեցիկ և հարատև փրկսոփայություն կպահանջե, որ ուսումն կամ գիտությունն փորձով այլ ստուգվի»³⁸:

Դարաշրջանի ամենաէական գծերից մեկը, որ չի վրիպում հետազոտողի աչքից, արտաքին գիտությունների խնդիրն է: Հյուսիսային Հայաստանի մշակութային կյանքի առաջնորդը և հովանավորը Հաղպատից մինչև Օձուն, Նոր Գետիկ և Գանձակ XI դ. վերջում և XII դ. սկզբում իրավամբ դառնում է Հովհ.Իմաստասերը: Բացի բազմաթիվ տաղանդավոր ընկերներից, ինչպիսիք են Ալավկա որդի Դավիթը, Թոքակերի որդի Գրիգորը, Սխիթար Գոշը և այլք, նա ունի նաև իր գործը շարունակող տաղանդավոր աշակերտներ՝ XII դ. նշանավոր գիտնականներ Խաչատուրը, Գրիգորը և Հովհաննեսը:

Մի քիչ այլ են Ն.Շնորհալու ժամանակները: Արդեն «Հայոց մեջ հունական հռչակյալ վարժարանք չկային և ոչ դպրություն օտար լեզվաց, այլ ճանչցանք ալ, որ իր ԺԲ դարն մեր գրականության ամենեն ճոխ ու պայծառ դարն է՝ հետ ավուրց թարգմանչաց»³⁹ (նկատի ունի V դարը): Սա XII դ. արժեքներն է գիտնականի կողմից, երբ Գր.Պաշլավունին (1113 - 1166) և նրա եղբայրը՝ Ն.Շնորհալին (1166 - 1173) «նորոգեցին ոսկեղեն գրիչները»: Հատկապես վերջինս մեծություն է, որ դուրս է գալիս իր դարի շրջանակներից և դառնում համահայկական ու համաշխարհային դեմք: Դա, նախ՝ դրսևորվում է նրա կրոնաքաղաքական գործունեության մեջ, որով երկու նշանավոր գործիչները ձգտում են ապահով դարձնել կաթողիկոսական աթոռը, բարեկամական հարաբերություններ ստեղծել հարևան պետությունների և իշխանությունների հետ: Դա վերաբերում է Հայաստրական, Հայ-եգիպտական, Աղվանից կաթողիկոսության պահպանման և բազմաթիվ այլ խնդիրների՝ կաթողիկոսական իշխանությունների, բյուզանդացիների և այլոց հետ հարաբերություններին: Եղբայրները մտերիմ կապերի մեջ էին Փրանցիսկյան մեծ քարոզիչ Բեռնարդոյի հետ, որը նպաստեց Խաչակրաց 2-րդ արշավանքին՝ ի շահ Հայերի: Բանակցում էին Իկոնիայի սուլթանության հոգևոր առաջնորդների հետ՝ նաև մահմեդական աշխարհի հետ կարգավորելով առկա հարցերը:

Որպես արվեստագետ՝ Ն.Շնորհալին գնահատված է կրոնական իր ստեղծագործություններով, որոնցում պատկերված են մարդ-Աստված փոխհարաբերությունները: Նրա առաջին մեծածավալ չափածո երկի՝ «Վիպասանություն» պոեմի կապակցությամբ (գրված՝ 1121թ.) հետազոտողը նշում է, թե երիտասարդ բանաստեղծը փորձում է «հրեշտակներ բարձր խորհրդոց մեջ մտնել և կատարել... որչափ որ հողեղեն մարմին կրնա արժանավորիլ՝ իր հողությունը թե ոչ իսպառ թոթափելով. գոնե անոր երկրաքարշովթենեն ազատելով կամ կռվելով՝ ազատվելու և թեթևանալու»⁴⁰: Իսկապես գեղեցիկ է, երբ արվեստագետի ինքնահաստատումը

³⁸ Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենյաց հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 295:

³⁹ Ղ. Ալիշան, Շնորհալի..., էջ 124:

⁴⁰ Նույն տեղում. էջ 59:

ներկայացվում է փոթորկուն պայքարի ձևով: Ոչ ոք նրա նախորդներից այնքան բազմազան չափեր և «ոճեր» չի գործադրել, որքան նա: Որպես նորարար՝ նրան համեմատում է «բազմարդյուն մեծ պապ» Գր.Մագիստրոսի հետ, որը «նոր ճամփա մը փորձող» է, բայց, «այն ճամփան ստուգիվ հարթող, ընդարձակող և պեսպես բաժնող՝ դարձյալ մեր Շնորհալին է»⁴¹: Գիտնականը ուրախ է, որ հաղթահարում է նույնահանգ բանաստեղծության «ականջ թմրեցնող» և «լեզվի շնորհքը և հարատվությունը» նվազեցնող սկզբունքները: Այդ անցումը նա տեսնում է «Բան հավատոյ» «քերթվածին մեջ»:

Ինչ վերաբերում է պատմական թեմատիկային, ապա «Վիպասանությունից» հետո մյուս այդօրինակ երկը «Ողբ Եդեսիոյ»-ն է: Ծոսին (իսաչափ) իշխանի թեթևաբարո վարքի պատճառով 1144թ. դեկտեմբերի 23-ին Զանգի ամիրայի հրոսակները մտնում են քաղաք և սկսում նախճիրը: Հատկապես դաժան են վարվում կաթոլիկների հետ, որոնցից 2000-ին անգլիորին սրածում են: Ն.Շնորհալու Զորավոր անունով եղբորորդին՝ Ապիրատը, պատմում է բանաստեղծին դեպքերի սահմանեցուցիչ մանրամասները, որից ցնցված՝ վերջինս գրում է պոեմը: Խոսելով երկի դիմառական ոճի մասին՝ գիտնականը ցույց է տալիս նրա արժանիքները՝ նշելով. «Թե իրեններուն մեղաց համար պատուհաս մեր այս, և այլ ամենքն ալ պետք է վախենան, ոչ ոք վստահի իր հավատքին վրա... բայց չտարակուսին ալ հավատացյալք, թե Աստված ինչու անհավատից կմատնե զիրենք»⁴²: Չորագործները կպատժվեն իրենց կատարածի համար: Անգամ ողբերգության մեջ տեսանելի են հույսի հեռանկարներ:

Ն.Շնորհալու «Բան հավատոյ», «Յիսուս Որդի» պոեմները գնահատում է որպես բարձրարժեք ստեղծագործություններ, որոնցում կարևորվում են աստվածաշնչյան թեմաների մշակումները, երկրորդ գալստյան ու դատաստանի պատկերները: Պատահական չէ, որ հենց «Բան հավատոյ»-ն ամենից շատ թարգմանվեց և բարձր ընդունելության արժանացավ եվրոպացի խոտապահանջ հետազոտողների ու ընթերցողների կողմից: Այդ առաջնակարգ երկը նոր, «իմն տեսակ «Դրախտ Կորուսյալ» հինգ դար ավելի առաջ, քան զՄիլտոն հանճարյալ»⁴³:

Լ.Ալիշանը անդրադառնում է միջնադարի մեծ բանաստեղծի բոլոր երկերին: Բավարարվենք նրանով, որ գիտնականը եվրոպական Վերածնության ինչ-ինչ գծեր իրականացած է տեսնում մեր X - XII դդ. գրականության մեջ՝ առանց այդ մասին խոսելու: Ինչ վերաբերում է նրա գրական մեծ վաստակին, ապա ասվածը չափազանց քիչ է դրա ընդգրկման լայն սահմանները պատկերացնելու համար: Չէ՞ որ «Հուշիկներով», «Հին հավատքով», «Հայապատումով», «Սոփերք»-ների հատորներով և բազմաթիվ հետազոտություններով նա ստեղծեց գրականագիտական մի առանձին դպրոց: Նրա երկնաթիռն մտքի և մանրամասների սուր դիտողականության համար Ա.Տերտերյանը նրան տալիս է գիտնական-բանաստեղծ բարձր կոչումը⁴⁴: Մի հանգամանք, որ գալիս էր մեր ավանդական գրականությունից:

⁴¹ Նույն տեղում, էջ 70:

⁴² Նույն տեղում, էջ 211:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Տե՛ս Ա. Տերտերյան, Հայ կյանքներ, Ե., 1944, էջ 6:

Մեկըսրյա հեռավորությունից, որ բաժանում է մեզ մեր գրականության նահապետից, ավելի է կարևորվում նրա մեծ վաստակը հայ կյանքում:

АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ X – XII ВЕКОВ В ОЦЕНКЕ Г.АЛИШАНА

С.М.МХИТАРЯН

Р е з ю м е

Закономерности развития армянской средневековой литературы X – XII вв. Алишаном рассматриваются с новой точки зрения. Высоко оценив работу переводчиков этого периода, он показал значение их творческого подвига. Особенно высоко оценены им жизнь и литературное наследие таких гениев, как Г.Нарекаци, Гр.Магистрос, Пахлавуни, Ог.Имастасер Саркаваг и Н.Шнорали. Это же послужило критерием оценки наследия самого Алишана.